

Օտարերկրյա ուղղակի ներդրումների գլոբալ, տարածաշրջանային միտումները և դրանց դինամիկան Հայաստանի Հանրապետությունում

Վերլուծությունը կատարվել է Հայաստանում որոշակի ժամանակահատվածների կտրվածքով օտարերկրյա ներդրումների և մասնավորապես օտարերկրյա ուղղակի ներդրումների (այսուհետ՝ ՕՌԻՆ) վերաբերյալ բարձրացված որոշ հարցերի պարզաբանման նպատակով:

Վերլուծությունն իրականացվել է հետևյալ երեք հիմնական ուղղություններով՝ ՕՌԻՆ համաշխարհային միտումների և շարժի ուսումնասիրություն, տարածաշրջանային երկրների հետ համեմատությունների իրականացում և Հայաստանում ներդրումային հոսքերի վերլուծություն:

Նախ նշենք, որ ներդրումների **համաշխարհային միտումները** հաշվի առնելը խիստ կարևոր է Հայաստանի նման փոքր և բաց տնտեսություն ունեցող երկրների համար և ներկայացնենք որոշ տվյալներ պաշտոնական հրապարակումներից:

Համաձայն UNCTAD (**United Nations Conference on Trade and Development** /http://unctad.org/en/PublicationsLibrary/wir2015_en.pdf/) պաշտոնական հրապարակումների՝ համաշխարհային ՕՌԻՆ հոսքերը 2014 թվականին անկում են ապրել: Գլոբալ ՕՌԻՆ-ը կազմել են 1.23 տրիլիոն դոլար՝ կրճատվելով 16 տոկոսով, ինչը պայմանավորված է եղել հիմնականում համաշխարհային տնտեսության անկայունությամբ, ներդրումային քաղաքականության անորոշությամբ և հարակից աշխարհաքաղաքական ռիսկերով:

ՕՌԻՆ հոսքերը դեպի **գարգացող** տնտեսություններ կազմել են 681 մլրդ դոլար՝ աճելով 2 տոկոսով: Զարգացող տնտեսություններն այդպիսով ընդլայնել են իրենց առաջատարությունը համաշխարհային հոսքերի գծով, ընդ որում՝ ՕՌԻՆ-ը ավանդական աճող շուկաներից, ինչպես, օրինակ, գարգացող Ասիական և Լատինամերիկյան երկրներն են, սկսում են շարժվել դեպի քիչ յուրացված շուկաներ՝ աֆրիկյան երկրներ: Աշխարհում 10 խոշոր ՕՌԻՆ ընդունող երկրներից 5-ը գարգացող տնտեսություններ են (խոշորագույնը՝ Չինաստանն է):

Հոսքերի ցածր մակարդակը **գարգացած** երկրներում պահպանվել է նաև 2014 թվականին: Չնայած միաձուլումների և կլանումների վերսկսմանը՝ ՕՌԻՆ ընդհանուր հոսքերը դեպի տնտեսությունների այս խումբը կրճատվել են 28 տոկոսով՝ կազմելով 499 մլրդ դոլար:

Ինչ վերաբերում է **այլ երկրների հետ համեմատական վերլուծություններին**, ապա ընտրվել են լայն իմաստով «տարածաշրջանային» և հարևան երկրները՝ Ադրբեյջան, Վրաստան, Թուրքիա, Ուկրաինա, Ղազախստան, Ռուսաստան և Բելառուս, քանի որ վերջիններիս տնտեսությունները որոշակիորեն կապված են Հայաստանի տնտեսության հետ, հարևան տնտեսություններ են և ինչ-որ չափով համադրելի են ներդրումային տեսանկյունից:

Տարբեր երկրների ցուցանիշների համադրելիությունն ապահովելու նպատակով օգտագործվել են **Համաշխարհային բանկի** կողմից հրապարակվող **վճարային**

հաշվեկշիռի օտարերկրյա ուղղակի ներդրումների **զուտ հոսքերը**, քանի որ ընտրված երկրներում ՕՌԻՆ ներկայացման մեթոդաբանությունները տարբեր են:

Ներկայացվել և վերլուծվել են ոչ միայն **ՕՌԻՆ զուտ հոսքերը**, այլ նաև **ՕՌԻՆ/ՀՆԱ** հարաբերակցությունը, ինչը հնարավորություն է տալիս տարբեր մասշտաբների տնտեսությունները բերել համադրելիության:

Աղյուսակ 1-ում ներկայացված են տարածաշրջանային երկրներում կատարված ՕՌԻՆ զուտ հոսքերը:

Աղյուսակ 1.

Օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքերը (Վճարային հաշվեկշիռ, մլն ԱՄՆ դոլար)			
Երկիր	2012	2013	2014
Հայաստան	488.8	370.2	382.8
Աճը (%)`	--	-24.26	3.42
Ադրբեջան	5,293.3	2,619.4	4,430.5
Աճը (%)`	-	-50.51	69.14
Վրաստան	831.3	956.3	1,273.7
Աճը (%)`	-	15.05	33.18
Ռուսաստան	50,587.6	69,218.9	20,957.7
Աճը (%)`	-	36.83	-69.72
Թուրքիա	13,282.0	12,457.0	12,550.0
Աճը (%)`	-	-6.21	0.75
Բելառուս	1,463.6	2,246.1	1,832.6
Աճը (%)`	-	53.46	-18.41
Ուկրաինա	8,175.0	4,509.0	847.0
Աճը (%)`	-	-44.84	-81.22
Ղազախստան	13,784.8	9,738.5	9 562.0
Աճը (%)`	-	-29.35	-1.81

Աղբյուրը՝ <http://data.worldbank.org/indicator/BX.KLT.DINV.CD.WD>

Քանի որ երկրների տնտեսության մասշտաբների անհամադրելիության պատճառով բացարձակ թվերով վերլուծությունը ճիշտ պատկեր չի արտացոլում, ուստի վերլուծության հիմք է ծառայել **յուրաքանչյուր առանձին երկրի աճի դինամիկան**:

2013 թվականին մի շարք երկրներում՝ ներառյալ Հայաստանում, Ադրբեջանում, Թուրքիայում, Ուկրաինայում և Ղազախստանում, նախորդ տարվա համեմատ նկատվել է ՕՌԻՆ զուտ հոսքերի **նվազում**: Ամենամեծ նվազումը վերոնշյալ երկրների շարքում գրանցվել է Ադրբեջանում, որտեղ ՕՌԻՆ-ը կրճատվել են2 անգամ կամ շուրջ 50.5 տոկոսով և Ուկրաինայում շուրջ 44.8 տոկոսով: Մնացած երկրներում անկումը համեմատաբար փոքր է եղել՝ Հայաստանում՝ 24.3 տոկոս, Թուրքիայում՝ 6.2 տոկոս, իսկ Ղազախստանում՝ 29.4 տոկոս:

Միևնույն ժամանակ Ռուսաստանում և Բելառուսում ՕՌԻՆ-ի զուտ հոսքերը նվազել են հաջորդ` 2014 թվականին: Այսպես, Ռուսաստանում անկումը եղել է մոտ 3 անգամ կամ 69.7 տոկոսով, իսկ Բելառուսում` 18.4 տոկոսով: 2014 թվականին անկում է գրանցվել նաև Ուկրաինայում` 81.2 տոկոսով կամ շուրջ 5 անգամ և Ղազախստանում` 1.8 տոկոսով: Հակառակ դրան **2014 թվականին Հայաստանում ՕՌԻՆ-ը աճել են 3.4 տոկոսով:**

Աղյուսակ 2-ում ներկայացված է ՕՌԻՆ ներհոսքերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ:

Աղյուսակ 2.

Օտարերկրյա ուղղակի ներդրումները (%-ով ՀՆԱ-ի նկատմամբ)			
Երկիր	2012	2013	2014
Հայաստան	4.9	3.5	3.5
Ադրբեջան	7.7	3.6	5.9
Վրաստան	5.2	5.9	7.7
Ռուսաստան	2.5	3.3	1.1
Թուրքիա	1.7	1.5	1.6
Բելառուս	2.3	3.1	2.4
Ուկրաինա	4.7	2.5	0.6
Ղազախստան	6.8	4.2	4.5

Աղբյուրը` <http://data.worldbank.org/indicator/BX.KLT.DINV.WD.GD.ZS>

Մի այլ ցուցանիշով ևս Հայաստանը վերջին տարիներին չի զիջել համադրելի երկրներին, իսկ շատերին նույնիսկ գերազանցել է: Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, 2012-14թթ ՀՆԱ-ի մեջ ՕՌԻՆ-ի ունեցած տեսակարար կշռով Հայաստանը դիտարկվող երկրների շարքում եզրափակում է առաջին քայակը. վերջին երեք տարիների ընթացքում առաջատար եղյակը կազմել են Ղազախստանը, Ադրբեջանը և Վրաստանը:

Վերլուծությունից ակնհայտ երևում է, որ Հայաստանում ՕՌԻՆ դինամիկայի միտվածությունը **համահունչ է և՛ համաշխարհային, և՛ տարածաշրջանային գլոբալ փոփոխություններին**, ինչն էլ պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանը, լինելով փոքր և բաց տնտեսություն ունեցող երկիր, առավել զգայուն է արտաքին հատվածից փոխանցվող ազդեցությունների նկատմամբ:

2015 թվականին **Հայաստանում կատարված օտարերկրյա ներդրումների** վերաբերյալ վերլուծությունը կատարվել է **ԱՎԾ կողմից հրապարակված** առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների հիման վրա, քանի որ վճարային հաշվեկշռի տվյալները դեռևս հրապարակված չեն:

Այսպես, **2015 թվականի հունվար-հունիս ամիսներին** օտարերկրյա պետությունների կողմից ՀՀ տնտեսության իրական հատվածում կատարված **ընդհանուր** ներդրումների **զուտ** հոսքերի (զուտ հոսքերը հաշվետու ժամանակաշրջանում օտարերկրյա ներդրումների

գծով ստացումների և մարումների տարբերություններն են) ծավալը կազմել է 81.9 մլրդ ՀՀ դրամ (շուրջ 171.5 մլն ԱՄՆ դոլար)՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ **աճելով 4.7 մլրդ դրամով** (շուրջ 9.8 մլն ԱՄՆ դոլար): Օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքերը 2015թ. առաջին կիսամյակում կազմել են 30.7 մլրդ ՀՀ դրամ (շուրջ 64.3 մլն ԱՄՆ դոլար)՝ նվազելով 42.7 մլրդ դրամով (շուրջ 89.5 մլն ԱՄՆ դոլար):

Աղյուսակ 3. (մլն ՀՀ դրամ)

	2014թ. հունվար-հունիս		2015թ. հունվար-հունիս		Բացարձակ փոփոխությունը	
	Զուտ հոսքեր		Զուտ հոսքեր			
	ընդամենը ներդրումներ	որից՝ ուղղակի ներդրումներ	Ընդամենը ներդրումներ	որից՝ ուղղակի ներդրումներ	ընդամենը ներդրումներ	որից՝ ուղղակի ներդրումներ
ԸՆԴԱՄԵՆԸ	77 172.3	73 377.8	81 867.0	30 701.7	4 694.7	-42 676.1

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, http://armstat.am/file/article/sv_07_15a_420.pdf

Հարկ է նշել, որ **ընդհանուր ներդրումները** ներառում են ուղղակի, պորտֆելային և այլ ներդրումները (վերջինում ներառվում են վարկերը և փոխառությունները, ապրանքների և ծառայությունների դիմաց վճարվելիք /ստացվելիք գումարները, ստացված/ տրված կանխավճարները): **Օտարերկրյա ուղղակի ներդրումը** մի երկրի ռեզիդենտի(ների) կողմից այլ երկրի ռեզիդենտ կազմակերպության կապիտալում ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի կամ բաժնեմասի 10% և ավելի ձեռքբերումն է:

Հետևաբար պարզ է դառնում, որ ՕՈՒՆ-ը հանդիսանում են ընդհանուր օտարերկրյա ներդրումների միայն մի տարրը, և վերջիններիս նվազումը չի նշանակում **ընդհանուր ներդրումների** նվազում:

Վերոնշյալ ժամանակահատվածում օտարերկրյա ուղղակի ներդրումների նվազումը գլխավորապես պայմանավորված է եղել «ՀայՌուսգազարդ»-ում ՀՀ կառավարությանը պատկանող **20 տոկոս բաժնեմասի օտարմամբ**, ինչի հետևանքով ավելացել է 2014թ. բազան, որի համեմատ էլ նվազել են այս տարվա ՕՈՒՆ-ը:

Պետք է նկատի ունենալ նաև, որ 2015 թվականից օտարերկրյա ներդրումների վերաբերյալ տեղեկատվությունը ԱՎԾ կողմից հրապարակվում է **գտված տեսքով**, այսինքն՝ որպես օտարերկրյա ներդրումների գծով ստացումների և մարումների տարբերություն:

Ներդրումների ստացում է համարվում բաժնետոմսերի ձեռքբերումը, ներդրումը արժեթղթերի մեջ, նոր վարկերի տրամադրումը/ստացումը և այլն:

Ներդրումների մարում (նվազեցում) են համարվում, օրինակ, կատարված վճարումները/ստացումները (վարկերի հիմնական գումարների մարումները, արժեթղթերի հետգնումը և այլն):

Այս պարագայում, օրինակ, մի կազմակերպության կողմից նախկինում ձեռք բերված վարկերի մարումները կարող են հանգեցնել ընդհանուր ներդրումների կրճատմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում առավել խոշոր ներդրող երկրները եղել են. **Գերմանիան**՝ 11.1 մլրդ ՀՀ դրամ (շուրջ 23.2 մլն ԱՄՆ դոլար), որին հաջորդել են **Կիպրոսը**՝ 11.0 մլրդ ՀՀ դրամ (շուրջ 22.9 մլն ԱՄՆ դոլար), **ԱՄԷ**՝ 9.3 մլրդ ՀՀ դրամ (շուրջ 19.6 մլն ԱՄՆ դոլար), **Վիրջինյան կղզիները**՝ 8.4 մլրդ ՀՀ դրամ (շուրջ 17.7 մլն ԱՄՆ դոլար), **Արգենտինան**՝ 7.8

մլրդ ՀՀ դրամ (շուրջ 16.3 մլն ԱՄՆ դոլար) և **Կանադան՝** 6.0 մլրդ ՀՀ դրամ (շուրջ 12.7 մլն ԱՄՆ դոլար):

Գերմանիան գլխավորապես ներդրել է հիմնային մետաղների արտադրության ոլորտում, Կիպրոսը՝ հանքարդյունաբերության, հիմնային մետաղների արտադրության և մեծածախ առևտրի ոլորտներում, ԱՄԷ-ն՝ մանրածախ առևտրի և էլեկտրական սարքավորանքի արտադրության, Արգենտինան՝ գյուղատնտեսության և օդային տրանսպորտի գործունեության, իսկ Կանադան՝ սննդամթերքի և ծխախոտային արտադրատեսակների արտադրության ոլորտներում:

Ներդրումները հիմնականում ուղղվել են՝ **մշակող արդյունաբերության** (35.3 մլրդ ՀՀ դրամ կամ շուրջ 73.9 մլն ԱՄՆ դոլար), **մանրածախ և մեծածախ առևտրի** (13.1 մլրդ ՀՀ դրամ կամ շուրջ 27.4 մլն ԱՄՆ դոլար), **հանքագործական արդյունաբերության** (11.8 մլրդ ՀՀ դրամ կամ շուրջ 24.7 մլն ԱՄՆ դոլար) և **տեղեկատվության ու կապի** (11.5 մլրդ ՀՀ դրամ կամ շուրջ 24.0 մլն ԱՄՆ դոլար) ոլորտներ:

Մշակող արդյունաբերության ոլորտում բավականին մեծ տեսակարար կշիռ ունեն հիմնային մետաղների արտադրությունը (19.7 մլրդ ՀՀ դրամ), ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը (5.9 մլրդ ՀՀ դրամ), դեղագործական արտադրանքի արտադրությունը (5.5 մլրդ ՀՀ դրամ) և խմիչքների արտադրությունը (5.2 մլրդ ՀՀ դրամ):

Տեղեկատվության և կապի ոլորտում առաջատար են հեռահաղորդակցությունը (7.1 մլրդ ՀՀ դրամ) և ծրագրային ապահովման մշակումը (4.3 մլրդ ՀՀ դրամ):